ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/35, 07.03.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Գետնառյուծ» ՍՊԸ

Պատվիրատու Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1.Կասեցնել ընթացակարգը և թույլ չտալ կնքել պայմանագիր 2-րդ չափաբաժնի մասով:

2.Չեղարկել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի գնահատման նիստի N3 արձանագրության «Գետնառյուծ» ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի մասով կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել հանձնաժողովին «Գետնառյուծ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15» ծածկագրով գնանշման հարցման 2-րդ չափաբաժնի մասով:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Հայաստանի Հանրապետության

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Պարոն Է. Սարգսյանին

<<Գետնառյուծ>> ՍՊԸ ,իրավաբանական հասցե ք.Երևան 0087 , Խաղաղ-Դոնի փողոց 5 բն.339 ՀՎՀՀ 00426035 հեռ.093777585 /010/471122 093777772

ՎՏԲ Հայաստան բանկ Հ/Հ 16041202298200

Տնօրեն՝ Վալերի Առաքելյան նույնը.քարտ 003854346 տրված 009

Պատվիրատու-Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՏԶՀ/

Հայաստանի Հանրապետություն,0037,Երևան,Կ.Ուլնեցու 31 հեռ.060501560

9850

07. 03 2019

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <<Գետնառյուծ>> ՍՊԸ-ն ստացել է ՏԶՀ գնման ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/13/14/15 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի արձանագրություն N 3 կազմված 04.մարտի 2019թ: Համաձայն արձանագրության մերժվել է <<Գետնառյուծ>>ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

<<Գետնառյուծ>> ՍՊԸ-ն իր անհամաձայնությունն է հայտնում կայացված որոշմանը և<<Գնումների մասին>>ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի սահմանած կարգի համաձայն Բողոքներ քննող անձին է ներկայացնում բողոքի իրավական հիմքերը, նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի սահմանած որոշումների շրջանակում: Այսպես՝

1 Կասեցնել ընթացակարգը և թույլ չտալ կնքել պայմանագիր մեր չափաբաժնի մասով;
2 Չեղարկել ՏԶՀ ՀԾ-ԱՇՁԲ-2019/13/14/15 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի N 3 արձանագրության <<Գետնառյուծ>> ՍՊԸ-ի 2-րդ մասնաբաժնի մասով կայացրած որոշումը;
3 Պարտավորեցնել հանձնաժողովին <<Գետնառյուծ>> ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր ՏԶՀ ՀԾ-ԱՇՁԲ-2019/13/14/15 ծածկագրով 2-րդ չափաբաժնի <<ՀՀ Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ոռոգման ցանցի կիսախողովակների տեղադրում>> շինշ աշխատանքների մասով:

Հանձնաժողովի կողմից մերժման հիմք է ընդունվել ՊԵԿ եզրակացությունը 77000ՀՀ դրամի չափով պարտավորություն ունենալու մասին,որը գերազանցում է Օրենքով թույլատրվող 50000ՀՀ դրամի շեմը:

ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացությունը վերաբերվել է դրոշմանիշային վճարներին յուրաքանչյուր աշխատողից ամսական 1000 դրամ գումարի չափով: ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին 16.դեկտեմբերի 2016թ. ընդունված ՀՀ Օրենքի Գլուխ 3 հոդված 11-ի 3-րդ մասով դրոշմանիշային վճար չեն վճարում այն անձինք,որոնք նույն գործատուի մոտ աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա աշխատավարձը՝ հարկերը և պարտադիր այլ վճարները նվազեցնելուց հետո, չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը:

Մեր կազմակերպությունը 2017թ-ին գտնվելով հարկադիր պարապուրդում՝աշխատողներին վճարել է նվազագույն աշխատավարձ և պարտադիր հարկեր ու վճարներ: Համարվելով Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, որի հիմնադիր սեփականատերերը նաև գործատու են

միաժամանակ, նաև աշխատողներ ,ուստի Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3 ենթակետի պահանջը մեր դեպքում կիրառելի չէ/հիմնավորող փաստաթղթերի պատճենները կցվում են:/

Կամավորության սկզբունքով այդ վճարումները առաջարկվել են 2017թ.-ի 01 հունվարից, իսկ մեր ընկերությունը 2017թ-ի ընթացքում շինարարական աշխատանքներ չի իրականացրել պատվերներ չունենալու պատճառով, դեռ ավելին գտնվել է ծանր ֆինանսական վիճակում՝ տնօրենի սրտի բարդ վիրահատության ենթարկվելու պատճառով:

Նշենք նաև, որ այդ վճարների պարտադիր լինելու մասին կազմակերպությունը որևէ ծանուցում չի ստացել, եկամտային հարկի կամ այլ հարկատեսակների էլեկտրոնային հաշվարկներում այդ 1000 դրամների գանձման պահանջը որևէ տեղ չի արտացոլված: Բացի դա մենք պարզեցինք, որ այդ գումարները պետական բյուջեի նկատմամբ պարտավորություն չի համարվում, այլ փոխանցվում է համապատասխան հիմնադրամին:

Այդուհանդերձ ՏՁՀ-ի գնումների համակարգողի կողմից տեղեկացվելուց հետո <Գետնառյուծ> ՍՊԸ-ն կատարել է 83000 ՀՀ դրամի չափով վճարում և հիմնավորող բանկային քաղվածքը ներկայացրել ՏՁՀ-ին:/պատճեն ներկայացրել ենք նաև Ձեզ/:

Ուստի խնդրում ենք՝ բողոքը քննելիս հաշվի առնել մեր բերած փաստարկները :

Հարգանքով՝

<<Գետնառյուծ>>ՍՊԸ

Տնօրեն ՎՄԱռաքելյան